ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» մայիսի 2018 թվականի N 183-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարտին Զավենի Գրիգորյանի (ծնված՝ 1957 թվականի մարտի 10-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել միավորելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի 6-րդ շարքի թիվ 15 և 2-րդ թաղամասի թիվ 6/15/1 հասցեի հողակտորները և օրինականացնել ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2820143, տրված 2011 թվականի հոկտեմբերի 3-ին), ուղղակի վաճառքի պայմանագիր, վավերացված 2016 թվականի նոյեմբերի 25-ին, անհատ ձեռնարկատեր Վալերի Գալստյանի կողմից 2018 թվականի մայիսի 21-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերի Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարտին Զավենի Գրիգորյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 2-րդ դաշտի 6-րդ շարքի թիվ 15 հասցեի հողակտորում 2013 թվականին ինքնակամ կառուցել է ճաշասենյակ՝ 53,17 քառ.մետր, հարթակ՝ 6,45 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 20,6 քառ.մետր, ճաշասենյակ՝ 31,66 քառ.մետր, ծածկարաններ՝ 42,97 քառ.մետր՝ 136,85 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մարտին Զավենի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ դաշտի 6-րդ շարքի թիվ 15 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Մարտին Զավենի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ դաշտի 6-րդ շարքի թիվ 15 և 2-րդ թաղամասի թիվ 6/15/1 հասցեի հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 6/15 և հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 711 620 (յոթ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2018 թվականի N 184-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Բակուր Ռուբիկի Գյուլինյանի դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգետարածքի 26-րդ թաղամասի թիվ 44/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 223,57 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 95,77 քառ.մետր մակերեսով այգետնակը (արտաքին մակերեսը՝ 113,14 քառ.մետր) և 5,16 քառ.մետր մակերեսով պարիսպը, իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23052018-07-0025, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2018 թվականի մայիսի 23-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգետարածքի 26-րդ թաղամասի թիվ 44/1 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 223,57 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 95,77 քառ.մետր մակերեսով այգետնակը (արտաքին մակերեսը՝ 113,14 քառ.մետր) և 5,16 քառ.մետր մակերեսով պարիսպն օտարել կառույցն իրականացրած Բակուր Ռուբիկի Գյուլինյանին:

2. Պարտավորեցնել Բակուր Ռուբիկի Գյուլինյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 1 011 431 (մեկ միլիոն տասնմեկ հազար չորս հարյուր երեսունմեկ), շինությունների վաճառքի արժեքը՝ 909 324 (ինը հարյուր ինը հազար երեք հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Լիազորել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

4. Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2018 թվականի N 185-Ա

ՄԵԼԻՆԵ ՄԱՆԱՍԵՐԻ ԵԼԻՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 78 տան բնակիչ Մելինե Մանասերի Ելինյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ ինքը չի աշխատում, ամուսինը՝ Արթուր Պողոսյանը ներկայումս մեկնել է ՌԴ՝ արտագնա աշխատանքի, նրանց խնամքի տակ են երեք անչափահաս երեխաները, ծնված 2008, 2010 և 2018 թվականներին և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Մելինե Մանասերի Ելինյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Մելինե Մանասերի Ելինյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2018 թվականի N 186-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հովհաննես Ռոբերտի Տեր-Թադևոսյանի (ծնված՝ 1968 թվականի սեպտեմբերի 12-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել փոխելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Այգեգործական զանգվածի թիվ 132 հասցեի հողակտորից 126,3 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հատվածի նպատակային նշանակությունը բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի և օրինականացնել այդ հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և երկու հատ բացված պատուհանները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13092016-07-0014, տրված 2016 թվականի սեպտեմբերի 13-ին, «ԷՎԸԼԱՅՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի մայիսի 22-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԷՎԸԼԱՅՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հովհաննես Ռոբերտի Տեր-Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Այգեգործական զանգվածի թիվ 132 հասցեի հողամասում 2004 թվականին ինքնակամ կառուցվել են շինություններ՝ 111,21 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով, ինքնակամ բացվել են երկու պատուհաններ, ինչպես նաև հողակտորի 126,3 քառ.մետր մակերեսով հատվածը հանդիսանում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հող:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ Հովհաննես Ռոբերտի Տեր-Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի թիվ 132 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների և ինքնակամ բացված երկու պատուհանների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Հովհաննես Ռոբերտի Տեր-Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի թիվ 132 հասցեի հողակտորից 126,6 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա:

2.Հովհաննես Ռոբերտի Տեր-Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի թիվ 132 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված երկու պատուհանները համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 194 444 (մեկ հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

6.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 29
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2018 թվականի N 187-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Խայլազ Մաջիթի Ամարյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 21-րդ փողոցի թիվ 25 հասցեում գտնվող կառուցապատված հողամասին կից, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 21-րդ փողոցի թիվ 25/1 հասցեում գտնվող 07-057-0118-0016 կադաստրային համարի 170,58 քառ.մ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23052018-07-0005, տրված 2018 թվականի մայիսի 23-ին և N 30052018-07-0064, տրված 2018 թվականի մայիսի 30-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 11-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Խայլազ Մաջիթի Ամարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 21-րդ փողոցի թիվ 25 հասցեում գտնվող կառուցապատված հողամասին կից՝ 21-րդ փողոցի թիվ 25/1 հասցեում գտնվող 170,58 քառ.մետր մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ կադաստրային արժեքով:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 771 704 (յոթ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Լիազորել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ համայնքապետարանի անունից հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

6. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2018 թվականի N 188-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Խայլազ Մաջիթի Ամարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Խայլազ Մաջիթի Ամարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 21-րդ փողոցի թիվ 25 և 21-րդ փողոցի թիվ 25/1 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 21-րդ փողոց, թիվ 25:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ